

Ուշ հեղինակմի դարաշրջանում դիալեկտիկական տրամաբանութեան գաղափարների զարգացման հարցում Դաւիթ Անյադթի նշանակութեան մասին

ՆԻԿՈԼԱՅ ՍՏԵՍԱԺԿԻՆ

Ե-Ձ. դարերի տրամաբանական ուսմունքների առանձին տարրերի նկատմամբ «դիալեկտիկական տրամաբանութիւն» եզրը օգտագործելը արդեօք օրինաչափակա՞ն է: Չէ՞ որ անտարակուսելիօրէն պարզ է, թէ նշուած եզրը այդ ժամանակներում ընդհանրապէս չէր կարող ծնունդ առնել: Դեռեւս Ջենոն իլեացին դիալեկտիկական հասկանում էր որպէս երկխօսութեան ընթացքում ճշմարտութիւնը գտնելու արուեստ եւ, ըստ էութեան, այն նոյնացնում էր տրամաբանութեանը: Այդ պատճառով «դիալեկտիկական տրամաբանութիւն» բառահիւսութիւնը այդ դարաշրջանում կը հնչէր նոյնքան անյաջող, որքան, ասենք, «տրամաբանական տրամաբանութիւն» աւելորդաբանական կառուցուածքը: Սակայն մեզ ժամանակակից դարում «դիալեկտիկական տրամաբանութիւն» եզրը կարողացել է քաղաքացիական իրաւունք նուաճել (Ֆ. Էնգելս, 1882 թ.) եւ սկսել է կիրառուել՝ նշելու համար մտածողութեան ձեւերի եւ ճանաչման եղանակների դիալեկտիկական ուսումնասիրող գիտութիւնը: Եւ յօդուածի սկզբում տրուած հարցին լիովին կարելի է տալ դրական պատասխան: Ե-Ձ. դարերում դիալեկտիկական տրամաբանութեան դադափարների ձեւաւորումը ուսումնասիրելը նուազ օրինական չէ, որքան որ, ասենք, նոյն ժամանակաշրջանում կիրեռնետիկական պատկերացումների սկզբնաւորութեան որոնումները, որի մասին, ինչ

խօսք, նոյնպէս չի կարելի խօսել որպէս արդէն կազմաւորուած դիտական առարկայի մասին:

Դիալեկտիկական տրամաբանութեան աւանդոյթները հետմէն չեւ Դաւիթ Անյաղթը կապուած են Արիստոտելի, Պլատոնի, Պլոտինի, Պրոկլի եւ Պորփիրի անունները:

Արիստոտելը խոստանեց tertium non datur — «երրորդը չի արուած» սկզբունքը ապադայելի նկատմամբ:

Պլատոնը դիալեկտիկական մեկնաբանեց որպէս իսկապէս զոյութիւն ունեցողի ճանաչման դիտութիւն եւ այն ստուգաբանօրէն հասցըրեց $\delta\iota\alpha\lambda\epsilon\gamma\epsilon\theta\acute{\alpha}\iota$ եղբին, որ նշանակում էր առարկաների ամբողջականութիւնների տեսակաւորում ենթախմբերի՝ ըստ դրանց հակադիր յատկանիշների:

Այդ նոյն բնագրում պէտք է յիշատակել նաեւ եռեակ կառուցուածքները Պլոտինի «Էնեադներ»ում եւ նրա ստորոգութիւնների «բրդային» համակարգը՝ «միակ»ով որպէս զադաթ, «Պարմենիդ» երկխօսութեան՝ Պրոկլի վերթարի մեկնութիւնը, որտեղ մասնաւորապէս, կիրառուած են հակադրութիւնների նոյնականութեան զոյութիւն եւ բացասման բացասման օրէնքը (negative negationis):

Պորփիրը մշակեց դիստոտմային (բաժանական) զասակարգման համակարգը:

Այսպիսին էր, համառօտակի, այն հիմքը, որի վրայ կարող էր յենուել Դաւիթ Անյաղթը դիալեկտիկական տրամաբանութեան ուղորտում հետազօտութիւններ կատարելիս, որոնց առաւել կարեւոր արդիւնքները կեղրոնացուած են նրա «Վերլուծութիւն» «Ներածութեան» Պորփիրի աշխատութիւնում¹: Ըստ որում դիալեկտիկական տրամաբանութեան արիստոտելեան-Պլոտինեան «բնօրինակ»ը Անյաղթի մօտ որոշ գերադասութեան է արժանացել պղատոնական «բնօրինակ»ի նկատմամբ:

Դաւիթ Անյաղթի տրամաբանադիալեկտիկական որոնումների կիրազէտում դտնուած է բնդհանուր հասկացութիւնների զոյաբանական եւ իմացարանական հիմնական օրէնքների խնդիրը, հարց՝ որի պատկանելիութիւնը դիալեկտիկական տրամաբանութեան իրաւասութեանը հազիւ թէ հնարաւոր է վիճարկել:

Առաջ քաշուած լինելով Պորփիրի կողմից, այդ խնդիրը աւելի ուշ օրկանապէս ներհիւսուեց միջնադարեան տրամաբանութեան

1. Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի, Համալսար. ֆնմական բնագիր, քարգմանութիւն գրաքարից, մախարանը եւ ծանօթագրութիւնները Ս. Արեւատեանի, Երեւան, 1976 (ռուսերէն):

դոյարանական հարցերի համալիրին: Ի՞նչ Դաւիթ Անյաղթի հակումը՝ զոյարանականացնել տրամաբանական դասակարգերը, լաւ յայտնի է: Մասնաւորապէս, յայտնի է նրա կարծիքը, օրինակ, այն մասին, որ տրամաբանական ստոյգ սահմանումների մտադրացման զոյարանական հիմքը եղել է հողային սահմանները ճիշդ որոշելու անհրաժեշտութիւնը²: Դաւիթը պնդում է՝ քանի որ «մի բան ենթարկուած է բաժանման, մի այլ բան ենթարկուած է սահմանման, մի այլ բան էլ կարիք է զրոյ՝ ասպնջուման եւ վերլուծութեան», ապա զրան համապատասխան ձեւաւորում են դիալեկտիկայի չորս եղանակները՝ բաժանող, սահմանող, ասպնջումող եւ վերլուծող:

Դիալեկտիկական տրամաբանութեան դարդացման համար բացառիկ կարեւոր նշանակութիւն է ունեցել Դաւթի այն հետազոտութիւնը, որը նուիրուած է ունիվերսալիաների (ընդհանրականք) խնդրին՝ նրա «Վերլուծութեան» յունարէն խմբագրութիւնում: Իր զննութիւնը նա սկսում է ընդհանուր բնոյթի մասին $\alpha\alpha\theta\theta\lambda\omicron\upsilon$ զոյութիւն ունեցած հիմնական տեսակէտների դասակարգումից: Աւելի ուշ միջնադարեան տրամաբանութիւնում յունական $\alpha\alpha\theta\theta\lambda\omicron\upsilon$ եզրին համադասարանութեան լատինական «universale»³ բառը: Դաւիթը գրում է. «...ընդհանուրը սոսի մտածողութեան մէջ չէ, այլ կայ իրականութեան մէջ, այն մարմնաւոր չէ, այլ անմարմին է եւ զոյութիւն ունի բազմութիւնից առաջ, բազմութեան մէջ եւ բազմութիւնից յետոյ...»⁴:

2. Ն. Ստեփանիս, Մաթեմատիկական Տրամաբանութեան Ձեւաւորումը, Մոսկուա, 1967, էջ 75 (նուսբէմ):

3. Այս եզրաբանական գուգահեռականութեան բնագրաբանական ապացոյցը ներկայացրել է Մարտին Գրաբմանը, 1909 թ.-ին (տես՝ M. Grabmann, **Geschichte der Scholastischen Methode**, v. I, Berlin, 1909, s. 296.

4. Դաւթի յունարէն բնագրում առուած է.

“... ὅτι οὐκ ἐν Φιλαῖς ἐπινοίαίς ἐστὶν ἄλλ’ ὑφέστηκε, καὶ ὅτι οὐ δώματα ἄλλ’ ἀδώματα, καὶ ὅτι πρὸ τῶν πολλῶν εἶναι καὶ ἐν τοῖς πολλοῖς καὶ ἐπὶ τοῖς πολλοῖς ...,

Davidis Prolegomena et in Porphyryl Isagogen Commentarium, Commentaria in Aristotelem graeca, edita consilio et autoritate Academiae litterarum regiae Borussicae, vol. 18, pars 2. Berolini, 1904, p. 116.

Համեմատիր՝ Դաւիթ Անյաղթ Վերլուծիւն «Ներածութեան» Պորփիրի, էջ 48-51 (նուսբէմ):

Դաւթի՝ մէջբերուած այս խտորոշ ու շեշտակի «բանաձեւը» թոյլ է տալիս առանց որեւէ բնագրօսիկ ճիշդի եղբարկացնել, որ նրա հեղինակը ոչ միայն էապէս ճշդել է ունիվերսալիաների խնդրի պոսիվիւրեան հարցադրումը, այլեւ առաջին անգամ, փաստօրէն, տուել է խնդրի լուծման այսպէս ասած փոխդիջնոմային տարբերակը չափաւոր (արիստոտելեան) իրապաշտութեան ոգով, տարբերակ, որը յաճախ վերադրում, տանում հասցնում են Ալբերտ Փոն Բոլշտեդին եւ Թոմմա Աքուինացուն եւ, որի կանխադուշակումը երբեմն աշխատում են տեսնել Իրն Սինայի կամ էլ Պրոկլի մօտ:

Այսպէս, փիլիսոփայութեան արեւմտադերմանացի պատմաբան Ռուպերտ Լայլ⁵ ենթադրում է, թէ Թոմմա Աքուինացին «բանաձեւը» փոխ է առել Պրոկլից, բայց ցոյց չի տալիս, թէ Պրոկլի յատկապէս ո՞ր բնագիրը նկատի ունի: Մեզ թւում է, որ այդ «բանաձեւը» Թոմմա Աքուինացին կարող էր փոխ առնել ոչ թէ Պրոկլից (ու՞մ մօտ այն արտայայտուած է տակաւին միատիկական ձեւով), այլ, աւելի շուտ՝ Դաւիթ Անյաղթի «Վերլուծականի» ծանօթագրութիւնում բերուած բնագրից: Ի հարկէ, այս վարկածը կարիք ունի լրացուցիչ բնագրաբանական ստուգման:

Այլ կերպ՝ ոչ թէ Պրոկլը, այլ հենց Անյաղթն է աղդել դէպի ունիվերսալիաների խնդրի լուծմանը ցոյց տրուած միջնադարեան մօտեցումների բնոյթի վրայ եւ շատ բանով կանխորոշել այդ մօտեցումները: Անյաղթի $\pi\rho\acute{o}$ $\tau\acute{o}\nu$ $\pi\omicron\lambda\lambda\acute{\omega}\nu$ արտայայտութեանը համապատասխանեցուել է լատինական «ante rem»-ը /1/: Անյաղթի $\acute{\epsilon}\nu$ $\tau\omicron\iota\varsigma$ $\pi\omicron\lambda\lambda\omicron\iota\varsigma$ դարձուածքը հաղորդուել է լատինական «ni re»-ով /2/: Անյաղթի $\acute{\epsilon}\pi\iota$ $\tau\omicron\iota\varsigma$ $\pi\omicron\lambda\lambda\omicron\iota\varsigma$ արտայայտութիւնը ամրացել է լատինական «post rem» /3/ բառակապակցութիւնում: Ունիվերսալիաների դոյութիւն ունենալը միայն /1/ դոյութի իմաստով ընդունելը նշանակում է պղատոնիզմ՝ որպէս մի իւրօրինակ գերիրապաշտութիւն: Ունիվերսալիաների դոյութիւնը միաթամանակ /1/, /2/ եւ /3/ դոյութիւնների լուսաբանմամբ ընդունելը արիստոտելեան բնոյթի իրապաշտութիւն է (այս լուծմանն էր ամբողջութեամբ յարում Անյաղթը): Միայն /1/ եւ /3/ դոյութիւնը պահելը նշանակում է կոնցեպտուալիզմ... միաթամանակ /1/, /2/ եւ /3/ դոյութիւնները մի կողմ դնելը նոմինալիզմ է (անուանապաշտութիւն)... եւ այսպէս,

5. Rubery Lay, **Zur Lehre von den Transzendentalien bei Petrus Aureoli**, Bonn, 1964.

մենք տեսնում ենք, թէ որքա՛ն մեծ է Անյաղթի «բանաձեւ»ի դասակարգող ուժը :

Անյաղթի իմացաբանութիւնում եւ տրամաբանութիւնում ընդհանուրի ստորոգութիւնը կատարում է Պրոկլի միակի ստորոգութեանը պաշտօնին համեմատելի դերը : Օրինակ, կիրառելով եղակիի եւ ընդհանուրի ստորոգութիւնները, Անյաղթը դասակարգում է հետեւութիւնների տեսակները :

Ըստ Անյաղթի, ղեղուկցիան՝ արտածումը, ընդհանուրի մէջ երեւան է հանում եղակին, իսկ ինդուկցիան՝ մակածութիւնը, խիստ անյուսալի մի գործողութիւն, ընդհակառակը՝ ջտնում է ընդհանուրը գտնել եղակիի մէջ : Դաւթի նշանաւոր օրինակը (աւելի ուշ այն հանդէս է գալիս նաեւ Ստեփանոս Աղեքսանդրացու մօտ) այսպիսին է : Նկատուած է, որ ուտելիս շարժում է մարդու ներքին ծնօտը (մինչդեռ վերինը անշարժ է) . ձիու նոյնպէս ներքին ծնօտն է շարժւում . կապիկի, գայլի եւ ուրիշ կենդանիների մօտ զլուտում է նոյն բանը, կարծես թէ ինքնին ընդհանուր եզրայանգում է պահանջւում՝ ուտելիս շարժւում է կենդանիների ներքին ծնօտը : Բայց ահա լոյս է ընկնում վերին ծնօտով ծամով կոկորդիլոսը, եւ նախորդ ընդհանրացումը հերքւում է, եւ, դրանով իսկ՝ արժէքադրկւում : Սակայն արտածման եւ մակածութեան միասնութեան զաղափարը առաջ տանելու դիալեկտիկական դժուարութիւնը Դաւթ Անյաղթին ոչ մի կերպ չի մղում դէպի կասկածամտականութիւն, եւ իր «Սահմանք իմաստասիրութեան»ում նա մեթոդոլոգիական համոզիչ հակահարուած է հասցնում կասկածամտականներին :

«Պատահական յատկանիշը» վերլուծելու կապակցութեամբ Անյաղթը մօտենում է պատահականութեան եւ անհրաժեշտութեան յարաբերակցութեան դիալեկտիկան ըմբռնելուն : Դրա մասին վկայում է, մասնաւորապէս, նրա հետեւեալ բնագիրը. — «... ոչ մի տարօրինակ բան չկայ, որ գոյացութիւնը կազմւում է պատահական յատկանիշներից, որոնք մի բանի համար էութիւն են, իսկ միւս բանի համար՝ պատահական յատկանիշ, ինչպէս, օրինակ, ջերմութիւնը կրակի համար ե՛ւ էութիւն է, ե՛ւ պատահական յատկանիշ, որովհետեւ կրակի՝ որպէս անորոշ մարմնի համար նա պատահական յատկանիշ է, իսկ բուն կրակի համար՝ էութիւն, որովհետեւ կրակի գոյացութիւնը ջերմութիւն է : Նոյնպէս եւ ճաղատութիւնը մարդու համար պատահական յատկանիշ է, բայց Սոկրատի համար նա հանդէս է գալիս որպէս գոյացութիւն» :

Եզրակացնելով, ասենք, որ դիալեկտիկական տրամաբանութեան առանձին տարրեր Անյաղթի մօտ կարելի է գտնել ոչ միայն «Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի» աշխատութիւնում,

այլեւ նրա «Սահմանք Իմաստասիրութեան» եւ միայն հին հայերէն բնագրով սահմանուած «Մեկնութիւն ի «Վերլուծական» Արիստոտելի» աշխատութիւններում :

Մենք պէտք է բարձր գնահատենք Դաւիթ Անյաղթի աւանդը ուչ հեղինակի դիալեկտիկական տրամաբանութեան պաշտօնական զարգացման գործում : Այլ ներդրումը միացնող կարեւոր օգակ ծառայեց դասական տրամաբանութեան եւ նրա արեւմտա-եւրոպական միջնադարեան ժառանգորդի միջեւ : Մերձաւոր Արեւելքում եւ Հիւսիսային Աֆրիկայում Դաւիթ Անյաղթի ազդեցութիւնը խիստ օժանդակեց միջնադարեան արաբալեզու, հայկական, վրացական, եւ հրէական տրամաբանական ուսմունքների զարգացման մէջ դիալեկտիկական առանձին եղանակները մշակելուն : Դաւիթ Անյաղթի տրամաբանական եւ իմացաբանական բնագիրները այսօր էլ նախկինի նման արդիական են դիալեկտիկական տրամաբանութեան պատմաբանների համար :

THE IMPORTANCE OF DAVIT ANHAGHT IN THE DEVELOPMENT OF DIALECTICAL LOGIC DURING THE LATE HELLENISTIC PERIOD

NICOLAI STYAJKIN

(Summary)

By the term «dialectical logic» today we understand the study of the dialectical development of the modes of thought and means of knowledge.

The problem of the ontological and epistemological significance of the universals lies at the center of Davit's philosophical venture. He follows the Aristotelian-Plutonian model partially discarding the Platonic tradition. Davit analyses at great length the dialectical relationship between the universals and the particulars, the accidental and essential qualities. In other words he tries to explain the role of the categories in acquiring universal and certain knowledge. Many of his conclusions remain valid even for present day advanced logic.